ՀՀ ԿԳՄՄՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ

2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների

շրջանավարտների հարցման համեմատական վերլուծություն

Կրթության որակի պատասխանատու Հ. Մինասյան

Գյումրի 2024

Գծապատկեր 1



Գծապատկեր 2



Գծապատկեր 3



Գծապատկեր 4



Գծապատկեր 5



	2022-2023ուս. տարի	2023-2024ուս. Տարի
այո	94	94,3
ոչ	6	5,7

Գծապատկեր 6



	1	2	3	4	5
Գնահատական	1	2	3	4	5
2022-2023ուս. տարի	0	0	4	12	67
2023-2024ուս. Տարի	0	1,8	1,8	25,5	70,9

Գծապատկեր 7



Գծապատկեր 8



Գծապատկեր 9



Գծապատկեր 10



Գծապատկեր 11



Գծապատկեր 12



Գծապատկեր 13



Գծապատկեր 14



Վերլուծություն

Հարցման նպատակն է բացահայտել և գնահատել շրջանավարտների բավարարվածության մակարդակը կրթության որակից, ինչպես նաև բարելավել կրթական գործընթացները և ապահովել որակյալ կրթություն:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ում, 2023-2024 ուս. տարում ավարտելուց հետո ուսումը շարունակող շրջանավարտների թիվը աճել է 3.2%-ով, որը ցույց է տալիս, որ ի տարբերություն նախորդ տարվա, շրջանավարտները կարևորել են բարձրագույն կրթության դերը կարիերայում հաջողության հասնելու գործում: Սակայն, ինչպես նախորդ տարի, այս տարի ևս շրջանավարտների կեսից ավելին, (57%) չի պատրաստվում ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն, որը պայմանավորված է գործատուների հետ սերտ համագործակցության արդյունքում ուսանողների աշխատանքի տեղավորման հավանականության բարձրացմամբ, ուսանողների ստացած մասնագիտական գիտելիքների և ձեռնարկատիրական գիտելիքների ձեռքբերմամբ, որի արդյունքում ուսանողները ձգտում են տեղավորվել իրենց մասնագիտական աշխատանքի կամ հիմնել իրենց սեփական գործը:

Գծապատկեր 2-ում տեսանելի է, որ ձեռքբերած տեսական գիտելիքների, գործնական դասերի, արտադրական ուսուցման, պրակտիկաների արդյունավետ կազմակերպման շնորհիվ շրջանավարտների մեծ մասը 64.2 %-ը մասնագիտական կարողությունների ձեռքբերումը գնահատել է բարձր. 1.2%-ով ավել 2022-2023 ուսումնական տարվանից

Օտար լեզուներից ձեռքբերած գիտելիքները լավ գնահատած ուսանողների քանակը նվազել է 13%-ով, որը մասնագետների պատճառաբանմամբ պայմանավորված է երրորդ կուրսում շրջանավարտների պրակտիկաների, նախաավարտական և ավարտական աշխատանքներին ինտենսիվ պատրաստմամբ: Արդյունքում օտար լեզուների ուսուցումը ժամանակային առումով մղվում է երկրորդ պլան:

Պրակտիկաների օգտակարությունը գերազանց գնահատած շրջանավարտների թիվը մնացել է անփոփոխ:

Գծապատկեր 5-ում տեսանելի է, որ «Արդյոք ուսանողների գիտելիքները օբյեկտիվոր են գնահատվել» հարցին 2022-2023 ուստարում դրական գնահատական է տվել ուսանողների 94, իսկ 2023-2024 ուստարում՝ 94.3 տոկոսը

2023-2024 ուս. տարում ուսումնարանի մասնագիտական արհեստանոցները համալրվել են նոր սարքավորումներով, գործիքներով, գույքով, ինչի շնորհիվ Գծապատկեր 6-ում և 13-ում շրջանավարտների գոհունակությունը ՈՒսումնարանի գույքի, կահավորման, արհեստանոցների կահավորումը գործնական պարապմունքների լիարժեք իրականացման համար համապատասխանության վերաբերյալ հարցերի դրական ցուցանիշներն ավելացել է 3.9 և 4 %-ով:

2022-2023 ուսումնական տարում Կարիերայի ուղղորդման կենտրոնի աշխատանքների արդյունավետությունը, ի տարբերություն նախորդ տարվա, որը նվազել էր 2%-ով, 2023-2024 ուստարում ավելացել է 6,7%-ով որը պայմանավորված է Կարիերայի ուղղորդման Կենտրոնի արդյունավետ աշխատանքով՝ տարաբնույթ միջոցառումների, սեմինարների, շրջայցերի կազմակերպմամբ:

Գծապատկեր 8-ում տեսանելի է, որ Գրադարանում առկա մասնագիտական և գեղարվեստական գրականությունից օգտվող ուսանողների դրական գնահատականը բարձրացել է 13.3 %-ով: 2024 թվականին ՄԿՈՒԶԱԿ-ն անհատույց օգտագործման է հանձնել ուսումնական ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, մեթոդական, տեղեկատվական և վերլուծական հանդեսներ:

Գծապատկեր 9-11-ում շրջանավարտները 2023-2024 ուստարում կայուն բարձր են գնահատել ուսումնարանի ղեկավարության, դասախոսական կազմի, ուսխորհրդի, ծնողական խորհրդի կատարած աշխատանքները:

Եզրակացություն

Ընդհանրացնելով հարցման արդյունքները՝ կարելի է փաստել, որ շրջանավարտները ընդհանուր առմամբ դրական են գնահատում ուսումնարանի գործունեությունը և արդյունավետ են գնահատում ուսումնառության տարիներին իրենց ձեռք բերած մասնագիտական գիտելիքները և գործնական հմտությունները:

Կրթության որակի պատասխանատու՝ Հ. Մինասյան